

-Հայ ժողովուրդին կրած վնասները կարելի չէ թուանշաններով գնահատել, ոչ Յեղասպանութեան հետեւանքով վնասները եւ ոչ ալ Յեղասպանութենէն առաջ դարերու ընթացքին կրած կորուստները՝ այն օրերէն երբ օսմանցիք տիրեցին Փոքր Ասիոյ հայութեամբ բնակուած տարածաշրջանին:

Բաւական երկար պիտի ըլլայ թուել ձեր հարցադրած՝ «ինչպիսի՞ վնասներ»ու ցանկը, սակայն դիրացնելու կամ գաղափար մը կազմելու նպատակով փորձենք միայն տնտեսական դիտանկիւնէն, գլխաւոր կէտերու մէջ ներկայացնել «վնասներ» կամ կորուստներ հասկացողութիւնը.

- Հայ սեղանաւորներուն չվերադարձուած փոխառութիւններն ու վարկերը
- Հայ սեղանաւորներուն Գանձային պահեստներու բռնագրաւումը
- Կանխիկ գումարներու, հարստութիւններու, հաստատագիրներու կողոպուտը
- Թանկագին մետաղներ, օտար դրամանիշ եւ արժեթուղթերու իւրացումը
- Ապահովագրական եւ կալուածային արժեթուղթեր
- Ձեռնարկային փաստաթուղթերու եւ արժեգիրերու ոջնցացումը
- Դրամատուներու աւանդներ, վճարագիրեր ու վարկագիրերու անհետացումը
- Վանքեր, եկեղեցիներ, կրթական օճախներ, ամրոց դղեակներ, վաճառատուներ, արհեստանոցներ, առեւտրական եւ արհեստից հաստատութիւններ, բնակարաններ, պալատներ, կալուածներ եւ անոնց հարստութիւններուն ապօրինի տիրացումը
- Թեթեւ եւ ծանր արդիւնաբերական բնագաւառներ ինչպէս՝ բամպակի, ցորենի, գարիի, զանազան արմտիքներու, պտղատեսակներու, գիւղատնտեսական (այգիներ, խաղողի եւ գինիի, արտադրութիւն), անասնաբուծական, արջառ, ազարակներ..... երկար է շարքը...

Տակաւին չեմ ուզեր խօսիլ մարդկային կորուստներու, ու մատղաշ սերունդներու կորուստին մասին: Ամբողջ ժողովուրդ մը իր արդիւնաբերութեամբ ու տնտեսութեամբ, կալուածներով հարստահարուեցաւ, տեղահանուեցաւ եւ կոտորուեցաւ: Այո, հայ ժողովուրդը թալանուած էր դարերու ընթացքին, բայց Յեղասպանութիւնը արմատախիլ դարձուց մեր ժողովուրդը իր հողէն, հարստութիւններէն, կալուածներէն: Ֆիզիքապէս,

բարոյապէս, տնտեսապէս ոչնչացնելու ծրագիր մըն էր Յեղասպանութիւնը: Թալանուեցաւ այն, ինչ կը պատկանէր հայ ժողովուրդին: Իմ նշումներս աւելի պատկերաւոր գնահատելու համար պիտի թելադրեմ, որ մեր ընթերցասէր հասարակութիւնը կարդայ Դոկտ. Պետրոս Տէր Մաթոսեանի «Հայ Դրամագլուխին Ճակատագիրը, Օսմանեան Կայսրութեան Վերջաւորութիւնը» արժեքաւոր ուսումնասիրութիւնը: Այնտեղ շատ յստակ եզրակացութիւն պիտի քաղէք Երիտթուրքերու եւ անոնց յաջորդող Հանրապետականներու ձեռամբ, 1915-1923 տարիներու մէջ ինկած ժամանակամիջոցին, մեր ժողովուրդին ֆիզիքական, տնտեսական, մշակութային ու ընկերային կորուստներուն մասին: Միաժամանակ պիտի թելադրեմ կարդալ «Հայ Սեղանաւորները Օսմանեան Կայսրութեան Մէջ» գիրքս (բազմալեզու հրատարակութիւն մը), որմէ օրինակներ կարելի է գտնել Հայաստանի Ազգային Գրադարանին մէջ:

Միսիս Դուլստեֆան